№ 64 Յունիսի 30 Շաբաթ 1884 Յունիսի 30 Շաբաթ № 64

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Մшакъ».

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար՝ վճարում են իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄԱՐՍԷՅԼԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆՆ

ՈՒԼԻՍ ՊԻԼԱ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունի յայտնելու իր Թղթակիցներին և առևտրական դասակարգին, որ բացի Թիֆլիզից, Նուխում, Շուշում, Պարսկաստանում և այն ամեն քաղաքներում, ուր հարելի կը լինի ունենալ առևտրական յարաբերութիւն Ֆրանսիայի, գլխաւորապէս Մարսէյլի, Լիոնի, Փարիզի հետ, ավանս է տալիս ապրանաց վրա 50-ից 80% և 6% տոկոսեաք։ Իսկ յիշեալ Ֆրանսիական քաղաքներից ապրանք կամեցողները կարող են բերել տալ նոյն տան միջոցաւ փողն կովկասում վճարելու պայմանով։

Աւելի մանրամասն տեղեկութիւնների համար դիմել Բաղդասար Քալանթարեանցին այս հասցէով. Тифлисъ, Эриванская площадь, № 14, домъ Кетхудова.

1—2

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Երրորդ տարի

1884—1885 ուսումնական տարվայ ուսման ընթացքը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից։ Աշակերտների թիւը սահմանափակ է։ Մանրամասն տեղեկութիւններ ու կուրսերի կանոնները և ծրագիրը կարելի է ստանալ ձրիապէս եղբարց Ծովիանովների բանկային գրասենեակում և Հիմնադրի բնակարանում, Սօլօլակի և Բոտչէվսկի փողոցների անկիւնում, Ալէքսանդր Ղորղանեանի տանը, № 21։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Въ Тифлисъ. Степану Мануэльянцу.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Գերմանիայից։ —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Աւազակապետ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, յունիսի 25-ին

Հաւաքարու Ս. Մարիամեան օրիորդաց ուսումնարանի հոգաբարձական—ինամակալական վարչութիւնը, համաձայն իր կարգադրութեան, կատարեց զպրոցիս ներկայ տարուայ հրապարակական քննութիւնները յունիսի 14 և 15-ին՝ հրաւիրելով յարգելի հասարակութեանը ի ներկայութիւն առանձին հրաւիրական տոմսերով։ Վարչութիւնս իր քաղցր և սրբազան պարտականութիւնն է համարում յայտնել իր հրապարակական շնորհակալութիւնը զպրոցիս ուսուցիչներին և վարժուհիներին, որոնք չը նայելով ստացած չընչին վարձատրութեանը, ըստ մեծի մասամբ պարապել էին բարեխղճութեամբ և եռանդով։ Վարչութիւնս չէ կարող չը յայտնել խորին յարգանք և իր առանձին շնորհակալութիւնը ուսումնարանիս տեսուչ մեծապատիւ պ. Կարապետ Թէմուրազեանցին, որը մեծ բարեխղճութեամբ վարելով իրան յանձնած գրոցի տեսչութիւնը՝ զեկավարել է նրա ուսումնական մասը յատուկ հմտութեամբ՝ համաձայն ծրագրի վարչութեանս։ Վարչութիւնս իր կողմից թեթևացնելով ուսումնարանի դրամական ծանր վիճակը, յայտնում է ընդ ամին իր խորին շնորհակալութիւնը Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որը ըստ չափու. կարողութեան չը խնայեց իր ձեռնհասութիւնը ուսումնարանին և ստիպում է քաղցր յոյս, որ ապագայում ևս նոյն համակրութեամբ կը շարունակէ իր աջակցութիւնը Հաւաքարու այդ միակ օրիորդաց զբոսրոցին և այդպիսով միջոց կը տայ վարչութեանս ապահովել նրա յարատևութիւնը ապագայում և աւելի ևս ընդարձակել նրա գործունէութեան շրջանը։ Հետևեալ համարներից մէկում վարչութիւնս պատիւ կունենայ հրատարակել զպրոցիս նուիրատուների անունները և նրա նիւթական հաշիւը։

Նախագահ վարչութեան՝ Միքայէլ Սալամբէկեանց

Հոգաբարձուք { Գ. Ցակոբեանց
Գր. Մկրտումեանց
Յ. Տէր-Ղևոնդեանց

Քարտուղար Սարգիս քահանայ Իգիթեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՐԴՈՒԻՆԻՑ մեզ գրում են հետևեալը. «Հազիւ թէ մեր գաւառապետ (окружный начальникъ) պ. Մէպիսով մաքրեց գաւառը աւազակներից, մեր մերձակայ նահանգի գաւառներում կատարվում են այլ չարագործութիւններ։ Արդուինի վաճառական դասը յարաբերութիւններ ունի չարունակ Կարսի, Օլթիի և Արդահանի հետ, որով ըստիպված է չարունակ երթևեկութիւններ անել այդ քաղաքների մէջ։ Բացի այդ, մանր առևտրականները գնում են շրջակայ գաւառները և այնտեղ գիւղացիների հետ կենդանիներով կամ ուտելիքներով փոխանակում են իրանց ապրանքները։ Այնպէս տարի չի պատահի, որ այս առևտրականներից մէկ կամ մի քանիսը չը կողոպտվեն աւազակներից Արդահանի կամ Օլթիի գաւառներում։ Այս տարի կողոպուտի վրա սպանութիւն էլ աւելացաւ։ Չորս արդուինցի առևտրականներ Արդահանի գաւառում առևտուր են անում, եզ, կով, ուլ և այլն են հաւաքում Արդուին բերելու համար։ Ճանապարհորդներից երկուսը հայ էին, երկուսը թուրք։ Սոքա Արդահանի եայլաների մօտ հանդիպում են երկու անծանօթ մարդկանց պիքօղներով զինաւորված, որոնք առաջարկում են մերձակայ ձորը իջնել, որ այնտեղ ազատ կարողանան կողոպտել։ Ճանապարհորդներից ոչ մինը օրինաւոր զէնք չունէր։ Երբ ճանապարհորդ թուրքերից մինը ընդդիմանում է և փորձում է աւազակներին տապալել, սոքա դատարկում են հրացանները ճանապարհորդների վրա և դաշոյններով յարձակվում են։ Ընդդիմադրող թուրքը սպանված է, երկու հայերն էլ վիրաւորված են, որոնցից մինը վտանգաւոր, դեռ ևս պառկած է անկողնում։ Աւազակները կողոպտում են բոլորին և հեռանում։ Զարմանալի է շատ, որ աւազակները՝ իրանց ոճրագործութեանց համար միշտ կարողանում են պիքօղներ, մնայդէրներ գտնել։ Այստեղ մենում էք արէք։ Քանի որ դուք Սէյրաններին անինամ էք թողնում, ես համոզված եմ որ քրիստոնէական կրօնի մասին բոլորովին գաղափար չունէք, որովհետև դուք թողել էք պըտուղը, և ընկել էք կեղևի ետևից, դուք մարդասէր չէք, բայց բոլոր ծիսակատարութիւնները անում էք։

Գիշեր էր արդէն, երբ մեր խղճալին յուսահատուած, վախից դողալով մեկնվեց սառն յատակի վրա և քնեց։

VI.

Երեկոյ էր։ Ձիւնը ծածկել էր փողոցները և չարունակում էր հանդարտութեամբ տեղալ։ Տղամարդիկ կռները նաւակի թիերի նման շարժելով, իսկ կանայք մետաքսեայ չարսաների մէջ փաթթված դուրս էին եկել եկեղեցուց ու դէպի տուն էին գնում։ Այս երեկոյեան եկեղեցուց դուրս եկողների թիւը սովորականից աւելի էր, որովհետև միւս օրը Ջրօրհնէքի տօնն էր։ Փողոցի անկիւնումը լապտերի առջևը կանգնած էր մի պատանի ոտաբոբիկ, շորերը պատառոտված, գլխին էլ մի առանց կօզիրոկի ֆուրաժկա դրած։ Նա արտասուք թափելով ողորմութիւն էր խնդրում անցորդներից։ Շատ քիչերը մի կոպէկ տալիս էին, իսկ միւսները «Աստուած տայ» էին ասում և անցնում, կարծես թէ Աստուած փողը ձիւնի հետ ներքև էր թափելու։

«Լօթիքակուլին», ասաց մի երիտասարդ և իր ընկերների հետ մօտեցաւ պատանուն։

—Դէ, Լօթիկակուլի, մէկ բարձրացիր այդ լապտերի ծայրումը գլխիդ վրա կանգնիր, քեզ փող եմ տալու։

Լօթիկակուլին կապիկի նման ծալեց թևերը, բարձրացաւ լապտերի գլուխը և բռնելով հորիզոնական փայտից գլուխը դրեց լապտերի ծայրին, իսկ զոյգ ոտները չիտակ բարձրացրեց դէպի վեր։

Մեր խեղճ որբը դարձեալ սկսում է գործ պըտռել և կոչկակար Խաչատուրի մօտն է մտնում։ Բայց երբ մի չարաթից յետ ուստայ Խաչատուրի ականջին հասնում է սատանայ Պետրոսի տարածած լուրը, իբր թէ Սէյրանը արտաքսվել է, որովհետև ուստի գլուխը պատառել է. ուստայ Խաչատուրը, որ այդպիսի բաներ չէր սիրում, արտաքսում է մի երեկոյ Սէյրանին, վախենալով իր անունից։

Այժմ ինչ էր մնում նրան անել։ Գիշերը ուր պիտի քնէր։ Ինչ պիտի ուտէր... մոլորված ոչխարի նման գնում էր նա քաղաքի փողոցներով, բայց չը գիտէր թէ ուր է գնում։ Նա հասաւ քաղաքի հարաւային կողմը, որտեղից սկսվում էր փոստային հին ճանապարհը, որը այժմ գնացող եկողից զուրկ էր։ Այստեղ կանգնած էր մէկ հին խանութ, որի դռները տարուած և փոքրիկ պատուհանի ապակիներն էլ փշրված էին։ Պատերի ծեփը թափված էր։ Կեղտոտ յատակի վրա դիզուած էին գինու շիշերի կտորտանքներ, որովհետև փոստային ճանապարհը այստեղով եղած ժամանակը, այդ խանութը գինետուն էր եղել։ Ահա թէ որտեղ գիշերները քնել որոշեց այն պատանին, որը գլուխը թամամի ծծերի վրա դրած էր քնել։ Ոչ բարձ ունէր, ոչ վերմակ ունէր, ոչ մի կտոր փալաս ունէր... Ամեն բան դեռ մնում էր կործանված տան պատերի տակ։ Յաւում ես, ընթերցող, այդ խեղճի համար։ Բայց դուցէ ինքդ պատն մնդամ պատահել ես այդ որբին, որը պատառոտված շապիկի մէջ մեկնել է դէպի քեզ իր ձեռը, բայց դու փայտդ պտոյտացնելով քո ճանապարհդ ես գնացել։ Ոչ ոք չէ կամեցել նրան խօսացնել, ոչ ոք չէ կամեցել տէր դառնալ նրան։ Գնացէք, յարգելի պարոններ, եկեղեցի մտէք, ծունր դրէք, աղօթք արէք, արտասուք թափեցէք, մեղայ եկէք, հաղորդվեցէք, մի խօսքով ինչ կամենում էք արէք։ Քանի որ դուք Սէյրաններին անինամ էք թողնում, ես համոզված եմ որ քրիստոնէական կրօնի մասին բոլորովին գաղափար չունէք, որովհետև դուք թողել էք պըտուղը, և ընկել էք կեղևի ետևից, դուք մարդասէր չէք, բայց բոլոր ծիսակատարութիւնները անում էք։

Գիշեր էր արդէն, երբ մեր խղճալին յուսահատուած, վախից դողալով մեկնվեց սառն յատակի վրա և քնեց։

VI.

Երեկոյ էր։ Ձիւնը ծածկել էր փողոցները և չարունակում էր հանդարտութեամբ տեղալ։ Տղամարդիկ կռները նաւակի թիերի նման շարժելով, իսկ կանայք մետաքսեայ չարսաների մէջ փաթթված դուրս էին եկել եկեղեցուց ու դէպի տուն էին գնում։ Այս երեկոյեան եկեղեցուց դուրս եկողների թիւը սովորականից աւելի էր, որովհետև միւս օրը Ջրօրհնէքի տօնն էր։ Փողոցի անկիւնումը լապտերի առջևը կանգնած էր մի պատանի ոտաբոբիկ, շորերը պատառոտված, գլխին էլ մի առանց կօզիրոկի ֆուրաժկա դրած։ Նա արտասուք թափելով ողորմութիւն էր խնդրում անցորդներից։ Շատ քիչերը մի կոպէկ տալիս էին, իսկ միւսները «Աստուած տայ» էին ասում և անցնում, կարծես թէ Աստուած փողը ձիւնի հետ ներքև էր թափելու։

«Լօթիքակուլին», ասաց մի երիտասարդ և իր ընկերների հետ մօտեցաւ պատանուն։

—Դէ, Լօթիկակուլի, մէկ բարձրացիր այդ լապտերի ծայրումը գլխիդ վրա կանգնիր, քեզ փող եմ տալու։

Լօթիկակուլին կապիկի նման ծալեց թևերը, բարձրացաւ լապտերի գլուխը և բռնելով հորիզոնական փայտից գլուխը դրեց լապտերի ծայրին, իսկ զոյգ ոտները չիտակ բարձրացրեց դէպի վեր։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԻԱԶԱԿԱՊԵՏ

—

Ոսկանի և իր կնոջ մահուանից մի ամիս անցած, Ներսէս աղան կանչեց իր մօտ նրանց որդուն։

—Սէյրան, ասաց նա, եթէ խօսք կը տաս, որ միշտ ինձ, տիկնոջդ և բոլոր քեզանից մեծերին հնազանդ լինել, քեզ հայհոյում են՝ պատասխան չը տաս, ծեծում են՝ պատասխան չը տաս, ապա դու կարող ես մեր տանը մնալ, խոհանոցումը ծառայել և մի կտոր հաց ուտել։

«Հնազանդ կը լինեմ, եթէ վատ բան չը հրամայեն ինձ գործելու. հայհոյանքին էլ պատասխան չեմ տայ, որովհետև հայհոյողը միայն իրան է ցածացնում, իսկ ինձ ծեծել ես ոչ ոքի թոյլ չեմ տայ։ Ես անբան անասուն չեմ, որ ինձ ծեծեն»։

Աղան աչքերը լայնացրեց և ոչ մի խօսք չը արտասանեց։ Փոքր ինչ յետոյ Սէյրանը դուրս գնաց, և մի ժամից յետ լսեց Եղիսէ բաջիից Ներսէս աղի հրամանը, որը պարտաւորացնում էր նրան իր համար մէկ տեղ գտնել։

V.

Այժմ Սէյրանը ստիպվեցաւ մոռանալ ծնողների ցաւը և իր մասին մտածել։ Նա այն տեսակ պատանիներիցն էր, որոնք սիրում են օդային ամրոցներ կառուցանել, որոնք միշտ սպասում են, որ իրանք պիտի նշանաւոր մարդ դառնան, որովհետև իրանց մէջ մի ինչ որ այժ են զգում։ Առաջին անգամ գնաց նա ուղիղ իր ուսուցչի մօտը և խնդրեց իրան օգնել։ Ուսուցիչը յայտնեց, որ ինքը կարող է ձրի ուսանելու համար աշխատել։ Բայց որտեղ պիտի նա ապրէր։ Ցեռոյ նա գնաց վարդապետի մօտ ու լաց լինելով խնդրեց իրան օգնել, որ ինքը կարողանայ ուսումը չարունակել։

«Ես ինչ կարող կըլլամ քեզ համար անել, որդի»—պատասխանեց վարդապետը—«գնա, մարդու մը մօտ արհեստ մը սովորէ, կամ ծառայէ ու ապրէ»։

Վերջը գնաց մէկ «սատանայ Պետրոս» կոչված դտակարի մօտ և խնդրեց իրան արհեստ սովորեցնել։ «Երբ արհեստը կը սովորեմ—մտածում էր նա—առաւօտները ուսումնարան կը գնամ, իսկ կէսօրից յետ կը գործեմ»։ Սատանայ Պետրոսը, որ իր անգութ բնաւորութեամբ յայտնի էր ամբողջ քաղաքին, սովորութիւն ունէր առհասարակ չորս հինգ տարով աշակերտներ ընդունել, իսկ դրան համաձայնեց երկու տարումը սովորեցնել։

«Ուստան երախի աչքումը լոյս է տեսել», ասաց հին աշակերտներից մինը իր ընկերոջ ականջին և չարունակեց թելը մոմել։

Եւ իրաւ, այստեղ պիտոյ է մի պատճառ լինէր, որ սատանայ Պետրոսը այնպիսի թելեթ պայման առաջարկեց։ Ես չեմ ասի ձեզ, ընթերցող, այդ պատճառը, ինչու որ եթէ ամեն բան իմանաք, շուտ կը պառաւէք։ Շարունակենք։

Դեռ ասեղ բռնելը նոր էր սովորել մեր խըղճուկը, երբ ինքը և ուստան խանութում մէնակ նստած ժամանակ սատանայ Պետրոսը մի ինչոր օտարոտի հրաման է տալիս նրան։ Սէյրանը գաղով հարուածում է ուստի գլխին, որից արիւնը հոսում է և ինքն, հարուածողն էլ, վազում է դէպի դուրս։

Սատանայ Պետրոսը իր գլխի պատռուելը ամենից ծածուկ է պահում, իսկ գիշերը դտակով է քնում, որ կինը չիմանայ։

Մեր խեղճ որբը դարձեալ սկսում է գործ պըտռել և կոշկակար Խաչատուրի մօտն է մտնում։ Բայց երբ մի չարաթից յետ ուստայ Խաչատուրի ականջին հասնում է սատանայ Պետրոսի տարածած լուրը, իբր թէ Սէյրանը արտաքսվել է, որովհետև ուստի գլուխը պատռել է. ուստայ Խաչատուրը, որ այդպիսի բաներ չէր սիրում, արտաքսում է մի երեկոյ Սէյրանին, վախենալով իր անունից։

Այժմ ինչ էր մնում նրան անել։ Գիշերը ուր պիտի քնէր։ Ինչ պիտի ուտէր... մոլորված ոչխարի նման գնում էր նա քաղաքի փողոցներով, բայց չը գիտէր թէ ուր է գնում։ Նա հասաւ քաղաքի հարաւային կողմը, որտեղից սկսվում էր փոստային հին ճանապարհը, որը այժմ գնացող եկողից զուրկ էր։ Այստեղ կանգնած էր մէկ հին խանութ, որի դռները տարուած և փոքրիկ պատուհանի ապակիներն էլ փշրված էին։ Պատերի ծեփը թափված էր։ Կեղտոտ յատակի վրա դիզուած էին գինու շիշերի կտորտանքներ, որովհետև փոստային ճանապարհը այստեղով եղած ժամանակը, այդ խանութը գինետուն էր եղել։ Ահա թէ որտեղ գիշերները քնել որոշեց այն պատանին, որը գլուխը թամամի ծծերի վրա դրած էր քնել։ Ոչ բարձ ունէր, ոչ վերմակ ունէր, ոչ մի կտոր փալաս ունէր... Ամեն բան դեռ մնում էր կործանված տան պատերի տակ։ Յաւում ես, ընթերցող, այդ խեղճի համար։ Բայց դուցէ ինքդ պատն մնդամ պատահել ես այդ որբին, որը պատառոտված շապիկի մէջ մեկնել է դէպի քեզ իր ձեռը, բայց դու փայտդ պտոյտացնելով քո ճանապարհդ ես գնացել։ Ոչ ոք չէ կամեցել նրան խօսացնել, ոչ ոք չէ կամեցել տէր դառնալ նրան։ Գնացէք, յարգելի պարոններ, եկեղեցի մտէք, ծունր դրէք, աղօթք արէք, արտասուք թափեցէք, մեղայ եկէք, հաղորդվեցէք, մի խօսքով ինչ կա-

աւելորդ չենք համարում կրկնել, որ Արդուինի գաւառի ժողովուրդը շատ անգամ կողոպուտներ է կրում Արդահանի և Օլթիի գաւառների աւազակներից»...

—

Թիֆլիսի Հալաբար մասից մեզ հաղորդում են. «Ամսոյս 24-ին, Հալաբարի ս. Լուսաւորիչ եկեղեցու երեսփոխանի հետ մի սոսկալի դժբաղդութիւն պատահեց: Հալաբարի հրապարակի վրա գտնվող Ն. Զէրքէզովից կապալով վերցրած տունը պ. երեցփոխը վերանորոգել էր տալիս. առաւօտեան 7 ժամին նա կանգնած էր վերոյիշեալ տան եռեի պատշգամբի վրա և նայում էր մշակներին, որոնք քանդում էին պատշգամբի ծածկոյթը: Քանդելու ժամանակ մի մեծ գերան վայր է ընկնում ուղղակի երիտասարդ երեցփոխի վրա և պատշգամբից իր հետ ցած գցելով գաւիթը, սաստիկ ջարդում է: Թէպէտ ամբողջ մարմնով ջարդվում է դժբաղդը, բայց ամենավտանգաւոր վէրքը ստանում է գլխի վրա: Գլուխը երեք տեղ ծակվում է. մինչև անգամ ճակատից դուրս է թափվում արիւնաթաթախ ուղեղը: Մշակները թէև վախենում են, բայց և այնպէս շուտ օգնութիւն են հասնում նրան, կանչում են բժշկի օգնականին, որ կապելով վէրքերը, խնայն ուղարկում է հիւանդանոցը: Ասում են, որ դժբաղդ երեցփոխի վէրքերը յուսահատական են»:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են. «Տեղւոյս երկսեռ դպրոցների քննութիւնները վերջացան. տղաները, համեմատաբար օրիորդների հետ, աւելի լաւ էին, թէև չէ կարելի ասել, որ ուսուցիչները, առանց բացառութեան, բարեխղճօրէն են կատարել իրանց պարտքը: Օրիորդները, որոնցից առանձնապէս պահանջելի են ձեռագործ և ասեղնագործութիւն, բաւականին թոյլ դտնվեցան: Այդ երևոյթը նրանով է բացատրվում, որ ձեռագործի ուսուցչուհին, իրան յայտնի պատճառներով, ուսումնական տարվայ ընթացքում դասերի մեծ մասից բացակայ է եղել: Հրաւիրում ենք յարգոյ վարչութեան ուշադրութիւնը այս հանգամանքի վրա»:

—

Խմբագրութիւնս ստացաւ «Վարժարան» մանկավարժական ամսագրի 6-դ համարը: Ահա նրա բովանդակութիւնը: — Ժառանգակցութիւն կրթութեան համեմատութեամբ. (վերջ)—Ս. Մանդինեան: — Այժմեայ դպրոցական կրթութեան վնասները:—Փ. Վարդանեան: Ուսուցչի կոչումը (վերջ)—Կուրտանի. թարգ. Ա. Սպարապետեան: —Դատաւանդութիւն (վերջ), — Մ. Շաէրների, թարգ. Գ. Շահբուդաղեան:—Բանասիրական՝ ընական գիտութեանց ունեցած յարաբերութիւնը գիտութեանց, ամբողջութեան հետ (վերջ) ճառ պրոֆէսոր Հ. Հելմհոլցի, թարգ. Աբիս. Յովհաննիսեան:

—

Ստացանք Զմիւռնիայի «Արեւելեան Փամուլ» ամսագրի մարտ ամսվայ համարը: Բովանդակութիւնը հետևեալն է.—Խարբերդ:—Մի քանի հատառօտ խօսք Թիֆլիսի հայ թատրօի մասին:—Վանէն տեղեկագիր:—Գովասանք ծաղկանց:—Մելքիսեդէկ սրբազանը:—Խնդիր Էջմիածնայ կաթողիկոսական ընտրութեան: — Ժողովանկար մարտ 12-ի համագումարին:—Նոր գերեզմանատան ծառեր:—Հանրագիր թէ դաւագիր:—Թղթակցութիւն: Գեր. Ս. առաջնորդի վերադարձը.—Տիկին Տուտու Կ. Պալիոզեան:—Բաղաքական:

—

«Օ. Լ.» լրագիրը հաղորդում է, որ ռուսաց ինքնաեռները (սամովար) աւելի և աւելի տարածվում են ոչ միայն ամբողջ Եւրոպայում, բայց մինչև անգամ և Ասիայում, ուր նրանց անուանում են «ռուսական մեքենայ»: Այս օրերս եկան այնտեղից մէկ թուրք և մէկ արաբ, որոնք այստեղի մագազիններից 25 ինքնաեռներ գնելով, Մէկկա տարան:

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Ամսոյս 14-ին և 17-ին Թիֆլիսի հայ դերասանական խմբի անդամներ՝ տիկին Փաշայեան Տէր-Գրիգորեան և պ. Տէր-Գրիգորեան, տեղական սիրողների մասնակցութեամբ ներկայացրին «Մի թաս թէյ», «Ժանսօ և Ժանէտ», «Նոր բնակարան», «Փակուած դրան մօտ», «Աշնանային երեկոյ գիւղում» և «Պիսօի տկճուր» պիէսաները: Առանձին ոգևորութեամբ լսում էին հանդիսականք տիկին Փաշայեան Տէր-Գրիգորեանցի երգերը, որոնց ներդաշնակում էր պիանոյի վրա տեղւոյս գաւառական բժշկի ամուսին տիկին Անտոնետա Սիմեօնովնա Զելինսկայա: Այստեղ գտնվող մի իտալացի պարոն Ֆարլինա երգեց մի կտոր Ֆաուստից: Առհասարակ մեր յարգելի հիւրերը գեղեցիկ ապատրութիւն գործեցին իրանց խաղով: Այսօր ամսոյս 18-ին նրանք ուղևորվեցան Ալէքսանդրոպոլ»:

—

Նոյն տեղից մեզ հաղորդում են, որ Կարզաղ գիւղից մի քանի վերստ հեռու, աւերակ եկեղեցու մէջ գտնուած է մի երիտասարդի դիակը, որի մահը յառաջացել է խեղդելուց: Հանգուցեալի պարանոցի վրա պարզապէս տեսնվում են խեղդելու նշանները՝ կապոյտ շերտեր: Երիտասարդը՝ գաւառիս Խ. գիւղի բնակիչ է և իր ծնողաց մի հատիկ զաւակ: Եղեռնագործութեան մէջ մեղադրվում է մի պարսիկ, որին հանգուցեալը յանձն էր առել տանել Արդահան իր ձիով. պարսիկը ձին առնելով փախել է և մինչ ցայժմ հետքը չէ գտնված:

—

«Кавказъ» լրագրում տպված է Թիֆլիսի պոլիցէմէյստերի պաշտօնական հետևեալ յայտարարութիւնը. «Տուլոնում, Մարսէլում և հարաւային Ֆրանսիայի մի քանի ուրիշ քաղաքներում յայտնվեցաւ վտանգաւոր ասիական խօլերա, իսկ ասիական Թիւրքիայի Բաղդադի վիլայէտում —ժամանակս: Ի նկատի առնելով, որ առևտրական և այլ յարաբերութիւնների միջոցով ժամանակային և խօլերային թոյնը կարող է հեշտութեամբ մտնել Անդրկովկասի սահմանները, ապա և մեր քաղաքը, վերին աստիճանի անհրաժեշտ է համարվում, Թիֆլիսի ազգաբնակութեան մէջ այդ վտանգաւոր հիւանդութիւնների տարածվելու առաջն առնելու համար այժմ և եթէ մաքրել քաղաքը ամեն տեսակ աղբից և կեղտոտութիւններից, որոնք, տարածելով միազմներ և վարակելով օդը, կարող են ամեն տեսակ տարաբնոյթ հիւանդութիւնների պատճառ դառնալ: Այդ պատճառով 844, 845 և 846 յօդ. բժշկ. պոլիցիայի կանոնադ., նոյնպէս Թիֆլիսի քաղաքային դումայի 1883 թվի օգոստոսի 1-ին հրատարակած պարտաւորիչ վճիռների հիման վրա Թիֆլիսի բնակիչների համար, յայտնվում է ընդհանուր դիտութիւն, որպէս զի եկող յուլիսի 10-ին բոլոր տանտէրերը, նոյնպէս և թաղաւորական, մասնաւոր և կառավարչական շինութիւնների կառավարիչները, հիւրանոցների, քարվանսարաների, սրճատների, դինետների, մթերքներ ծախող խանութների, արհեստանոցների և գործարանների, մսավաճառ խանութների տերերը անպատճառ մաքրեն անմաքրութիւնները և աղբը, իրանց տներում, բակերում, խանութներում, արդիւնաբերական հիմնարկութիւններում, տանելով այդ անմաքրութիւնները քաղաքային վարչութեան մատնացոյց արած տեղերը: Իսկ ասպագայ ժամանակում բակերի և տների մաքրելը ամեն օր կատարել: Կաշիների չորացնելը բացերում ազգաբնակութեան մէջ, նոյնպէս թաց կաշիների և առհասարակ գարշահոտութիւն բուրող բոլոր առարկաների պահեստի դնելը, լուացքի ջուր և առհասարակ կեղտոտ և անմաքուր ջուրը փողոցում թափելը, նոյնպէս աղբ ածելը ուր որ էլ լինի՝ խստութեամբ արգելվում է: Բաղարներում և շուկաներում առևտուր անողները, մաքրութիւն պահպանելով իրանց խանութների ներսում, պարտաւորվում են մաքուր պահել այն հրապարակները, որոնց մօտ առևտուր են անում, նոյնպէս և այն փողոցները, ուր գտնվում են իրանց խանութները: Վերոյիշեալ հրամանները չը կատարող անձինք խիստ պատասխանատուութեան կենթարկվին, իսկ կեղտոտութիւններ մաքրելը, քրէական. դատ. կանոն. 1217 յօդ. հիման վրա, կը կատարվի մեղաւորի հաշուով:

—

«Новое Обозрѣніе» լրագրին հաղորդում են, որ առևտրական բանկայի նախկին կառավարիչ Պ. Ս. Գամբարով, պատրաստաւոր է ընտրված Գիւղատնտեսական ընկերութեան կողմից ս. Վլադիմիրի համալսարանի կայանալի յիսնամեակին ներկայ լինելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վան, 29 մայիսի

Էջմիածնի մէջ կատարուած կաթուղիկոսական ընտրութեան վերջնական արդիւնքը՝ ասկէ իբր երկու շաբաթ յառաջ տեղեկացած էինք մասնաւոր հեռագիրներէ և այս վերջին փոստով ստացուած «Արևելք»—ներէն մանրամասնութեանց ըստ բաւականին ծանօթացանք: Ամեն. Տ. Ներսէս Սրբազան Ալթեպիսկոպոս Ընտրեալ, և Գեր. Տ. Մելքիսեդէկ Մուրադեանց ընտրելի եղած է փոխանակ Խրիմեան Հայրիկի՝ որոյ Կ. Պոլսի Ազգ. Երեսփոխ. ժողովի քուէներն ևս ի հաշիւ առնելով՝ անկէ աւելի քուէ ստացած կը լինի: Քանի որ խնդիրը մեզ մօտ բոլորովին բացայայտ չէ՝ երբէք արդարանալի չը կրնար լինել այս քմահաճ փոփոխութիւն՝ որ կատարուած է:

Եթէ Մակար Սրբազան՝ իբր փոխանորդ Կ. Պոլսի Երեսփ. ժողովին, իրաւունք ստացած է պ. Մեհրաբովէն տալ 130 քուէ. (ինչպէս այս անդամուան Արևելքների Կաւալեան թղթակցի հեռագրէն կերևէր), ուրեմն Կ. Պոլսոյ երեսփոխական ժողովի քուէներն ի հաշիւ առնուած և հետևապէս Հայրիկ Բ. ընտրեալ կամ քանտիդատ եղած է, բայց ինչպէս կերևի այս պարագայ մեզ համար նորէն անբացատրելի է, ըստ որում ստոյգ և աւելի մանրամասն տեղեկութիւններով խնդրի մասին լուսաւորուած չենք: Բայց եթէ ընտրութիւնը իսկապէս Պալաժենիայի տրամադրութեան համեմատ կատարուած է՝ ուրեմն խնդիրը ուրիշ կերպարանք ստացած կը լինի և

Հասկանալի է որ այս դրութեան մէջ պատրաստված վարտիք ունեցողը ինչ պիտի ներկայացնէ:

«Պահ, քո հօր տունը չը քանդվի, ինչ լօթին է», ասացին երիտասարդները և երկու կոպէկ տալով հեռացան:

Տեսնում ես, ընթերցող, այն մանուկը, որը մեծ ապագայ էր խոստանում այժմ «Լօթիքակուլի» է անուանվում: Այն մանուկը, որ աղաներին կրակոտ պատասխաններ էր տալիս, այն մանուկը որը ասում էր «ես ոչ ոքի իրաւունք չեմ տալ ինձ ծեծելու» երկու կոպէկի համար ինչ խայտառակ դրութիւն է ընդունում:

Նա չարունակում էր գիշերները քնել աւերակ խանութի մէջ: Առաւօտ շուտ զարթնում էր, գնում «Մովսէսի աղբիւրումը» լուացվում և սկսում աղքատութիւն անել: Քանի անցից խնդրեց նա, որ իրան ծառայ վերցնեն, բայց ոչ ոք չը համաձայնեցաւ, ասելով թէ քաղաքացի ծառան անպէտք է լինում, ծառան պիտի գիւղական լինի, այն էլ հեռու գիւղերից, որ շուտ չը փախչէ: Միւս կողմանէ Սէյրանի անունը արդէն հռչակուած էր որպէս մի փուչ կենդանի և սա զրպարտութիւն չէր այժմ: Նրա մէջ մեռել էին արդէն բոլոր այն ազնիւ զգացմունքները, որոնց ստեղծել էին Թամամը և ուսումնարանը և սա շատ բնական է:

«Եւ մին առակ էլ ասաց նրանց: Եւ ահա մէկ սերմը ցանող մարդ դուրս ելաւ դաշտը, որ սերմը ցանէ: Եւ եղաւ որ այդ սերմերից մէկն ընկաւ փշերի մէջ և կանաչեց: Բայց փշերը խեղդեցին նրան»: Այդ փշերը մեռցրել էին Սէյրանի սրտի մէջ դեռ արմատ չը բռնած ծառը: Սատանայ Պետրոսի զրպարտութիւնները և այն սարսափելի նեղութիւնները, որոնց նա այժմ ենթակայ էր, մեռցրել էին նրա ազնիւ զգացմունքները, բացի մէկից, սիրոյ զգացմունքից, որը վառ էին պահում նրա սրտում Թագուհու նրա հետ ունեցած հաղուագիւտ տեսութիւնները:

Միայնակ մուրազովապրել չէր կարողանում նա և երբեմն գողութիւն էր անում: Թէև որքան էլ մարդ նեղութիւնների ենթակայ լինի, պիտոյ է գողութիւնը անաղնութիւն համարէ և չանէ, բայց պիր այդ կարելի է պահանջել Սոկրատէսից և Պլատոնից, և ոչ թէ մի աչքաթող արուած պատանուց:

Սէյրանը տեսնելով որ բոլորովին մթնել է, գնաց մէկ մանրավաճառի մօտ և իր ժողոված կոպէկներով գնեց մի հաց ու մէկ մոմ, որովհետև ջրօրհնէք գիշեր էր և գնաց իր բնակարանը: Մի և նոյն գիշերը, չը մոռանամ ասել, բարեպաշտ մարդիքը Աստուծոյ անունով գինի էին կոնծում:

Այդպէս մեծացաւ որբիկը և քսան տարեկան եղաւ:

VII.

Գարնան գիշեր էր: Երկնակամարի վրա մի կտոր էլ ամպ չը կար և աստղերը փառաւորապէս կատարում էին իրանց պաշտօնը: Ամբողջ քաղաքը քնած էր: Միայն զարթուն էր մի 20 տարօր երիտասարդ, որը նստած էր մեզ ծանօթ հին միկիտանխանայի փչրված պատուհանի առջևը դրած մեծ քարի վրա: Ի հարկէ նա Սէյրանն էր, որը ժամը 9-ին ընկել էր քնելու, բայց մտածմունքներից ազատվելով չէր կարողացել: Այժմ դուրսը նստած նա դարձեալ խորասուզվել էր մտածմունքների մէջ: Նա յիշում էր իր ծնողներին, յիշում էր այն ժամը, երբ Թամամը ծիծաղելով ասում էր. «երբ մեծանաս, փող աշխատես, այն սիրուն աղջկան թեզ համար կառնեմ»: «Մեծացել եմ ահա, մայր, բեխերս դուրս են եկել, իսկ այն սիրուն աղջկան այսօր կամ վաղը կը տանեն. դէ ինչ ես սառն հողի տակ պառկել»: Նա մտաբերում էր այն բազմաթիւ խօսքերը, որ ինքը հարցնում էր մօրիցը, որը պատասխանում էր թէ «կը մեծանաս, կիմանաս»: Եւ նա սկսեց ինքն իրանից յօրինել և երգել հետևեալ տողերը:

Ի՞նչու, մայրիկ, ինձ ասա,
Իմ հագուստն է միշտ մաշված.
Ներսէս աղանց Մովսէսը,
Մեռաքսիցն է շոր հագած:

Որդիս, ամեն բան ունի
Իր պատճառը անկասկած:
Բայց լաւ է դու չիմանաս,
Կը մեծանաս, կիմանաս:

Մայր, ինչու ամեն մարդիք,
Ձեն սիրում ինձ, խօսացնում,
Ներսէս աղանց Մովսէսին,
Գրկում են ու համբուրում:

Որդիս, այդ պատճառ ունի,
Առանց պատճառ բան չի կայ:
Լաւ է դու այդ չիմանաս,
Կը մեծանաս, կ'իմանաս:

Բայց ինչու վարժապետը
Իմ վրա բարկանում է,
Իսկ Մովսէսի հետ միշտ
Քնքշութեամբ խօսում է:

Բաւական է, սիրելիս,
Գլուխս ինչ ես ցաւացնում:
Շատ բան լաւ չէ իմանաս,
Կը մեծանաս, կ'իմանաս:

Նա դեռ վերջին տողը չէր վերջացրել, երբ նկատեց որ մի օրիորդ կարմիր շալի մէջ փաթաթված մօտենում է իրան:

«Այդ, դու ՞ս», ասաց նա շփոթվելով:

—Այո, ես եմ, սիրելի, եկել եմ քեզ մի շատ տխուր լուր յայտնելու:

«Ինչպէս տնից դուրս եկար, մայրդ չիմացաւ: Ի՞նչպէս մէնակ եկար:

—Ամենը քնած էին: Ինչից պիտի վախենամ, ինձ համար այժմ մի և նոյն է ապրել թէ մեռնել: Գիտես ինչ է, Սէյրան, ինձ նշանեցին այս գիշեր և կիրակի օրը կը պսակեն. օրիորդի կոկորդը բռնվեց արտասուքից:

«Ուրիշ կերպ չէր կարելի սպասել, նազելի: Ես մի փչացած երիտասարդ եմ և այդպէս էլ պիտի մեռնեմ: Ես ինձ ուրախ կը զգամ, եթէ գտնեա դու երջանիկ լինես»:

—Ոչ, ես չեմ կարող նրա հետ ապրել... ես ինձ անպատճառ կը սպանեմ:

«Ով է նա»:

—Աբէլ աղան, այդ անպիտան ծերունին: Դեռ երէկ ես նրա վրա նամակ եմ գրել, որ ինձանից հեռանայ, բայց նա ծածկելով իմ նամակիս պարունակութիւնը, և ստորագրութիւնս ցոյց տալով պարծեցել է ուրիշների մօտ:

—Սիրելիս, եթէ նա չը լինի, մի ուրիշը պիտի լինի. ինձանից ինչ կարող ես յուսալ, որ ինքս էլ սոված եմ:

«Այն փողը, որ հայրս ինձ համար նշանակել է, մեզ բաւական է... Հիմայ ես եկել եմ խորհուրդ հարցնելու:

—Եթէ այդպէս է, ես կը հոգամ: Արի քեզ այժմ տուն տանեմ, որ հանգիստ քնես: Գնա, միամիտ եղիր, ես թոյլ չեմ տայ, որ այն գաղանը քեզ կլանէ:

Երիտասարդը համբուրեց օրիորդին, տարաւ մինչև նրանց փողոցի դուռը, ինքը վերադարձաւ և դառն արտասուք թափեց: Նա մտաբերեց այն ասրճանակը, որ մի անգամ գողանալով թաղել էր իր բնակարանի մօտ: Գետինը քանդեց, հանեց նրան և ձեռին խաղացնելով ներս մտաւ որ քնէ:

Խրիմեան կաթողիկոսական ընտրութեան վերջի ցանկէն դուրս թողնվելու մասին պատճառ մը յառաջ բերելը անպատշաճ էր, զի սովաւ գործի ուղղութիւնը կասկածի կենթարկվի: Մենք անպատեհ կը նկատենք այս կէտի վրա ծանրանալ, ըստ որում Ա. ընտրեալը որոշուէլէն զկնի Բ.-ին անուանումը ձեական գործողութիւն մէ գրէթէ, ուստի վստահ եմք թէ Բաղէշի, Մուշի, Երիզայի, Եգիպտոսի, և այլն տեղերի հայոց հետ Վասպուրականի հայերն էլ, որքան որ ցանկացող էին Խրիմեանի կաթողիկոսացման, սակայն ոչ նուազ գոհ և ուրախ են այժմ՝ տեսնելով գամբարձումն ամեն. Տ. Ներսէս ս. պատրիարքին ի գահն Հայրապետութեան հանուր հայոց: Քաղցր է մեզ յուսալ որ Նա, ըստ մեր ակնկալութեան, վինի արժանընտիր յաջորդ իր անուանակից հանգուցեալն Ներսէս Ե. Կաթուղիկոսին:

Ազգ. Սահմանադրութեան 24-րդ տարեդարձի չքեղ հանդէսը երկու օր առաջ կատարվեցաւ Ցայնկոյտների մէջ: Թիւրքական ժամ 5½-ին սկսաց հանդէսը: Ժողովրդեան ստուար բազմութիւն մը տեղական նուագածուաց և ուսանողների առաջնորդութեամբ՝ կը դիմէր դէպի Ցայնկոյտների ձորը որ զարնանայէն այս ամիսների մէջ խիստ հրապուրիչ տեսարան մը կընծայէ:

Իգական սեռէ հոծ խումբ մը գրէթէ կէսը կը կազմէր ներկայ եղող ահագին բազմութեան սպիտակ մը խմէ ներովը *) և գոյնզգոյն մէտակներովը **) երիտասարդ ծաղկանց: Դաշտ մը ձևացուցած էր այն ընդարձակ հովիտը, որ փողերի և զուռնա—նաղարայի ***) դղրդիւններէն յոյժ զուարթ երեսոյթ մը ստացած էր: Որոշեալ ժամին ճաչկերոյթի տոմսակ ունեցողները հետզհետէ Ցայնկոյտների ընդարձակ դպրոցը հաւաքվեցան, ուր պատրաստուած էր ճաշը: Բաժակներ առաջարկվեցան Սուլթանի, նախարարապետ Այիտ փաշայի, ի մասնաւորի սահմանադրութեան հեղինակների, Ամեն. Ներսէս ս. պատրիարքի, Հայրիկի, և այլն. նշանաւոր ազգայնոց կենաց:

«Կեցցէ»-ների եռանդագին ծափահարութեանց և զինուոր բաժակների ընդհարմանց չառաջինը ալիքի պէս տարածվեր չրջասփիւռ ահագին բազմութեան մէջ: Ոգևորութիւնը ընդհանուր էր և բազմականք կը գտնվէին իրանց ամենաուրախ արամադրութեանը մէջ: Եւ ի հարկէ թիւրք և հայ զեղծ պաշտօնէից հաճոյքին մասնուած և մասնառանդ ներկայիս մէջ՝ նիւթական խիստ անձուկ կացութեան մէջ գտնուող ժողովուրդի մը համար խիստ քաղցր կը լինին այնպիսի ուրախ վայրկեաններ, յորս ի մի վայր համախմբեալ կը տեսնեն՝ զիրեարս սահմ. տարեդարձի հանդիսի առթիւ:

Ճաշէն յետոյ բազմութիւնը յառաջ խաղաց դէպի հանդիսավայրը, որոյ բեմի ճակատը զարդարուած էր Սուլթանի, Ներսէս Պատրիարքի և Խրիմեանի մեծադիր պատկերներովն: Այնուհետև սկսան լինել բանախօսութիւնքն արական և իգական սեռի կողմանէ և ասոնց ալ աւարտումէն զկնի տեղի ունեցաւ տեղական պարը: Այսպիսով վերջացաւ հանդէսը և բազմութիւնը նորէն ուսանողաց և նուագածուաց ընկերակցութեամբ Խրիմեան Հայրիկի և անոի պ. Մկրտիչ Փորթուգալեանցի դրանց առաջ խմբվելով, յետ բանախօսութեանց և համակրական ցոյցերու, ցրվեցաւ սանելով հետն նոյն աւուր քաղցր և միխիթարիչ յիշատակները:

Դիտելի պարագայ մի է թէ այս անգամի հանդիսին մասնակցողքն էին գլխաւորապէս քաղաքիս երիտասարդները: Մենք աղաներ, կառավարական պաշտօնեայք և Առաջ. տեղապահ սրբազանը իրենց բացակայութեամբք կը փայլէին: Ուրախ ենք որ հանդէսը բաղդատաբար միւս տարիներէն աւելի օրինաւորութեամբ կատարվեցաւ և դովաւ երիտասարդութիւնը գործնապէս ցոյց տուաւ թէ ինքը՝ առանց ճոչագանների և տէր պապանների մասնակցութեան (որք մեծաւ մասամբ սահմանադրութեան սոյն հանդիսի համար զլացած էին դնել ¼ մէջէտնոց պելլէտներ) կարող է լաւագոյնս գործել:

Հասոյթի քանակը թէև առ այժմ անորոշ, սակայն քիչ լինել կը կարծվի: Արդիւնքը պիտի յատկանայ փոքրիկ տեսարակներ հրատարակելու՝ որք պարզ և ժողովրդային ոճով մը գրուած՝ բացատրեն ժողովրդեան սահմանադրութեան սկզբունքն, էական կէտերն ու օգտակարութիւնը:

Զեզ յայտնի կը լինի անշուշտ որ ուրբ ամերէ ի վեր Վանի Նահանգապետութեան պաշտօնը վարող Հասան փաշա պաշտօնական լինելով անառակ է: Ո՞վ Նրան առաջին անգամ ճանապարհից հանեց:—Աբէլ աղան: Մնացեալները ինքներդ ասացէք:

Ահա թէ ում էր տալիս Ներսէս աղան իր միակ աղջիկը: Այ, քո երեսդ սև լինի փեսայիդ հետ միասին, Ներսէս աղա: Ցարակոյս չը կայ որ նա կարող էր օրիորդին կին դարձնել, բայց միշտ կը սիրէր Նրան: Ես չեմ կարծում:

Դահլիճը թնդում էր. խմիչքը խմիչքի ետևից էր գալիս: Ոչ ոք իր խօսածը չէր լսում: Այդ խառնակութեանը վերջ տուեց տէր Եզեկիէլը, հրամայելով պատրաստվել: Օրիորդը հագնուած էր եւրոպական ձևով, բայց երեսը ծածկված էր: Երբ քահանան հրամայեց ձեռք ձեռքի տալ, Աբէլ աղան ձիու նման խրխնջաց և ձեռքը մեկնեց: Օրիորդի ձեռքն էլ կանայքը բռնեցին և տուին փեսային:

«Ի՞նչու է լաց լինում», հարցրեց քահանան:

—Ոչինչ, այնպէս, պատասխանեց աղջկայ հայրը: Տէր Եզեկիելը վերջացրեց իր գործը և ճանապարհ ընկան եկեղեցի:

Չեմ կամենում երկարացնել: Եկեղեցում պսակը կատարեցին: Միայն ուշադրութեան արժանին այն է, որ երբ քահանան օրիորդի համաձայնութիւնը հարցրեց, օրիորդը գլուխ չէր կամենում տալ: Մօտը խմբված կանայքը յետևի կողմից փոքր ինչ ճնշեցին գլուխը դէպի առաջ: Տէր Եզեկիէլը թէև այդ նկատեց, բայց, երևի ի պատիւ աղաների, չարունակեց իր գործը:

Եկեղեցու բակի դռնից դուրս էին գալիս ապագայ ամուսինները ձեռք ձեռքի տուած: «Թրբրփ» բարձրացաւ ատրճանակի ձայնը:

«Փեսան մեռաւ» աղաղակեցին մի կողմից:

«Լօթիքակուլին», լսվեցաւ փոքր ինչ հեռուից:

IX.

Վերոյիշեալ դէպքից անցաւ ուղիղ հինգ տարի, որի միջոցում ամեն բան մոռացվեցաւ: Թագուհին տեղէս մեկնեցաւ: Անցեալ շաբթուն տեղս հատաւ նրա յաջորդ և երբեմն Եդեսիոյ կառավարիչ Համիտ փաշան: Տեղս ժամանելէն մի օր յետոյ կառավարութեան պաշտօնատան հանդէպ և ի ներկայութեան մեծ բազմութեան մը կարդացվեցաւ իր արքունի ֆէրմանը:

Բազմութեան մէջ կը նշմարվէին թիւրք պաշտօնականներէն և սպիտակպուխներէն (մօլլա) ի զատ և Դրան այն հայ պաշտօնատարք, որք անցեալ տարի իրանց հուչակաւոր հանրագրով առիթ տվին Ցունիս 24-ի յեղափոխութեան: Կայսերական չքանշանները զոբս այն առթիւ ստացած էին՝ կը փայլէին ուսերնուն վրա: Նորեկ կուսակալի մասին առ այժմ ոչինչ չունիմ գրելու:

Անցեալ շաբթուն տեղւոյս Անգլիական դերհիւպատոս պ. Էյրըս քօնժէ ստանալով իր հայրենիք ուղեորվեցաւ:

Վան

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Լէյպցիգ, 12-ին յունիսի

Կիրակին բացի կրօնական նշանակութիւնից ունի և մի ուրիշ նշանակութիւն, որը վերաբերում է աշխարհային կեանքին: Այն է որ բանտերը մի օր հանգստանալուց յետ ուրիշ եռանդով է գործում, քան կը գործէր հակառակ դէպքում: Նոյնպէս և բոլոր միւս մարդիքը: Անգլիայում փորձով ապացուցել են, որ մի և նոյն մշակները երկու շաբաթում 14 օր գործած ժամանակը ուրիշ քիչ բան են յառաջացրել, քան թէ երբ երկու շաբաթում 12 օր են գործել: Ասողներ կը լինեն թէ վաճառականը ամբողջ շաբաթը պարապ նստած է լինում խանութի մէջ, էլ ինչ հարկաւոր է նրան կիրակին հանգստանալ: Բայց, մեր կարծիքով, 6 օր առաւօտից մինչև երեկոյ խանութում պարապ նստելը մի մեծ տանջանք է, այն էլ հոգեկան տանջանք:

Ահա թէ ինչու են տեղս կիրակի օրը բոլոր գործարանները և մագազինները կողպած լինում, բացի այն խանութներից, որոնք ուտելու մթերքներ են ծախս անում և բացի ճաշարաններից:

Կիրակի առաւօտ փողոց դուրս գնալով, դուք կը տեսնէք որ մարդ ու կին, եղբայր և քոյր, մանուկ և փոքրիկ աղջիկ ամենքը դէպի եկեղեցի են գնում, ձեռքներին բռնած չքեղակազմ երգարանը: Եկեղեցում չարած են նստարաններ, որոնց վրա իսուն նստում են մարդիք, կանայք և երեխաներ: Նստելու համար բարձր սրահներ էլ կան: Ցիշեալ սրահներից մէկը յատկացրած է ահագին երգեհոնին, որի առջևը չարված է երգեցիկ խումբը: Երգապետը իր առջևը կախած տախտակի վրա չարում է այն թուերը, որոնք ցոյց են տալիս, թէ որ երգը պիտի երգվի: Որոշեալ ժամանակին երգեհոնը հանում է իր զըրդալի ձայնը և կարծես թէ մարդու սիրտը զողացնում է: Երգեհոնի հետ սկսում է երգել և երգեցիկ խումբը, որին հետևում է ժողովուրդը: Երգեցողութիւնը շատ գեղեցիկ է անցնում մինչև վերջանալը: Մի քանի երգ երգելուց յետ պատի վրա չինած մեծաղեայ ամբիօնը բարձրանում է քարոզիչը: Քարոզը տևում է մի ժամ, որից յետ դարձեալ մի երգ են երգում և դուրս գնում: Դռների մօտ ամաներ կան, որոնց մէջ ցանկացողը գցում է իր լուման:

Հէնց այդ ժամանակներում ճեմելու տեղում զինուորական խումբը սկսում է երաժշտութիւնը: Այնտեղ արդէն շատերը ժողովված են լինում և եկեղեցուց դուրս եկողներն էլ մեծ մասամբ այնտեղ են դիմում: Երաժշտութիւնը վերջանալուց յետ ժողովուրդը գնում է ճաշելու:

Կէսօրից յետ ամենքը գնում են զբօսնելու: Թէև Լէյպցիգում շատ տեղեր կան զբօսնելու համար, բայց ժողովրդի մեծ մասը գնում է «Վարդի հովիտ» կոչված անտառը: Վերջինս Լէյպցիգի համար ծայր չունէ, որովհետև նա չարունակվում է մինչև ուրիշ քաղաքները:

Վարդի հովիտը թէև մի քանի տեղերում միայն վարդի ծառեր ունէ, բայց հէնց ինքը, ամբողջովին վերցրած, մէկ վարդ է ներկայացնում: Բարձրը ծառեր, կանաչ մարգագետիններ, բազմաթիւ ծառուղիներ, սոխակներ և ուրիշ երգիչ թռչուններ, էլ որանից լաւ ինչ էք ուզում: Վարդի հովիտում կան մի քանի մեծ բէստորաններ, որոնց բակը լիքն է լինում մարդկանցով վերոյիշեալ ժամանակին: Նոյն անտառի մէջ գտնվում է մէկ գիւղ «Գոշլիս» անունով, որի եկեղեցումը մէկ մեծ մարգագետին տախտակներով չրջապատված է: Այդ մարգագետնի մէջ արածում են տասնի չափ առոյգ և գեղեցիկ կովեր: Իսկ դուրսը նստարանների վրա նստում են մարդիքը և իրանց առաջ կը թել տալով կովին խմում են կաթը, որի չատ մեծ բաժակը 10 կոպէկ, իսկ «թէյի բաժակը» 5 կոպէկ արժէ:

Ամենալայն ծառուղիների վրա վազում են ֆայէտոններ և ձիաւորները, իսկ միւս ալլէյները բացառապէս ոտով մանեկողների համար են: Այնտեղ կան և նստարաններ ի հարկէ, որոնց վրա աւելի նստում են ապագայ ամուսինները և քաղցը խօսակցում միմեանց հետ, մինչդեռ հայ օրիորդները տների անկիւնից չէն դուրս գալիս, իսկ երիտասարդները չը գիտեն ինչպէս անցկացնել երկար օրը:

VIII.

Կիրակին գիշերացել էր, երբ Ներսէս աղանց բոլոր սենեակները, դահլիճը, սրահները, բակը, փողոցը լիքն էին տղամարդկանցով, կանանցով, օրիորդներով, երեխաներով...: Բոլոր սենեակները չքեղ զարդարված էին: Դահլիճին ահագին կանթեղները եկեղեցու կերպարանք էին տալիս: Բակում կախված էին գոյնզգոյն լապտերներ, որոնք լուսաւորելով պարտիզի ծառերը մի հրաշալի տեսարան էին ներկայացնում: Փողոցը նոյնպէս լոյս էր ցնորիւ բազմաթիւ ջահերի: Ամեն տեղ շարժմունք, ամեն տեղ կենդանութիւն էր տիրում: Ամենքի սրտերը ուրախ էին: Օդն էլ ուրախութիւնով լցված էր: Միայն մի չատ փոքրիկ տեղ թագաւորում էր տրտմութիւնը. այդ թագուհու սիրտն էր: Նա հագած թանգագին հագուստներ, զարդարված քարեղէններով, նստած էր փոքրիկ սենեակում, շրջապատված դեռահաս օրիորդներով:

«Ճանապարհ բացէք, երեխայք հեռացէք... տեղ տուէք, ասացէք պատրաստ լինեն. խնամնք գալիս են», աղաղակում էին ամեն կողմից: Ամենքը շփոթվեցան և սկսեցին դէս ու դէն վազել: Ֆայտոնները, կառքերը կանգնեցան մեծ դռան առջևը: Խնամանց մարդիքը փեսային շրջապատած ներս մտան բակը:

—Համեցէք, Աբէլ աղա, աչքիս վրա տեղ ունէք, խօսեց Ներսէս աղան և նորեկները մտան դահլիճը: Բայց դու, ընթերցող, դեռ մի մըտնիր. քեզ պիտի ծանօթացնեմ նոր փեսայի հետ:

Քառասունուհինգ տարօք, միջակ հասակով մի մարդ, որի թէրերը եփած խնձորի, իսկ ճակատը թրջած կաշու էին նմանում: Գլուխը մազերով, այդպէս ասած, ոչ թէ ծածկված էր, այլ շրջապատված, որովհետև մէջ տեղում մի կլորակ առանց մազի տարածութիւն կար: Երեսը ածիլված էր, իսկ բեխերը մանրիկ էին:

Վերարկուի կոնները ուսերին գցած, բուխարի մորթուց գտակը գլխին և մէջքին ոսկէ գոտի:

Նա սաստիկ հարուստ էր. ունէր շատ տներ, այգիներ և ձիերի երամակներ: Իր բնակած տունը այնքան գեղեցիկ էր, որ եթէ Սուլթանին ընդունելու լինէր, ամօթ քաշելու բան չը պիտի ունենար: Ծառաները թուրքեր էին, ազախինները ռումներ:

Երբ նա շուկայում յայտնվում էր, ամենքը առանց ազգի խտրութեան աշխատում էին գլուխ տալ նրան, թէև մտքներումը միշտ հայհոյում էին, որովհետև խանութների քրէհը օրից օր թանգացնում էր: Այդ կարճ նկարագրութիւնը անելուց յետ, ես կը տամ քանի մի տեղեկութիւններ նրա անցրած կեանքի մասին, որպէս նիւթեր նրա կենսագրութիւնը դրել ցանկացողների համար:

1. Երբ քսան տարօք էր, մի անգամ նա բոլորովին դեղին զոյն է ստանում: Դիմում է մի յայտնի պառաւ կնոջ, որը խորհուրդ է տալիս դեղին քարքար (янтарь) խաղացնել ձեռին, որ դեղնութիւնը անցնէ: Նա փորձում է, բայց օգուտ չէ ստանում: Վերջը դիմում է բժիշկներին, որոնք յայտնում են թէ հիւանդութիւնը.... և բժշկում են:

2. Մի քանի տարուց յետ մի գիշեր նրա միրուքը, բեխերը և յօնքերը թափվում են. բայց յետոյ դեղերի դիմելով, ի հարկէ, դարձեալ ստիպում է նրանց բուսնել:

3. Օտարութիւնում դատաստանի է ենթարկվում նա, մէկ օրիորդի անպատուած լինելով, բայց ազատվում է չնորհիւ դեղին ոսկիների:

Ո՞վ է այդ թուրք պատանին, որ այդպիսի երկար մազեր ունի:—Աբէլ աղի բարեկամն է: Ո՞վ է այդ կինը:—Այն ինչ մարդու կինն է, որ այժմ էլ թոքախտ ստացաւ, մեռաւ և նոյնպէս մոռացվեցաւ: Այժմ Բ. քաղաքի ժողովուրդը մի ուրիշ հարցով էր հետաքրքրվում: Սիբիրից փախած մի խումբ աւազակներ կտրել էին բոլոր ճանապարհները: Գիւղերից քաղաք և քաղաքից գիւղերը վախենում էին գնալ և այս պատճառով առևտուրը դադարել էր: Լրագիրները լիքն էին աւազակների մասին ստացված տեղեկութիւններով: Մի օր գրում են. «անցեալ շաբաթ աւազակները թագնվում են քաղաքից մինչև Գ. տանող ճանապարհի վրա և ամեն մի անցողին կողոպտում են ու ոտները կապելով տանում են անտառը: Այդպէս մի օրվայ մէջ 50 մարդիք են կողոպտվում: Մի ուրիշը գրում է. «երէկ ցերեկով աւազակները մտնում են Մ. գիւղի եկեղեցին, որտեղ աւազակապետը խփում է վարդապետի երեսին և հրամայում է բոլոր թանգակին իրեղէնները ժողովել»: Դարձեալ գրում են. «այս օրերը քաղաք բերին վաճառական Ներսէս աղին և գտակակը ստացնայ Պետրոսի անգլուխ դիակները»:

Հասարակութիւնը ամեն մի լուրը լսելուց անիծում է, հայհոյում է աւազակներին, բայց ոչ ոք չը գիտէ, թէ այդ խմբի պետը հասարակութեան և հասարակական կազմակերպութեան պըտուղն է, ոչ ոք չը գիտէ որ նա Սէյրանն է:

Հարցրէք վերջինից, թէ ինչու է այդքան մարդկանց կողոպտում: Նա կը պատասխանէ, «ես կողոպտում եմ այն մարդկանց, որոնք կարող էին խնամել ինձ, բայց անտէր և անդաստիարակ թողեցին»:

Ս. Թառայեանց

Երեկոյեան բազմաթիւ ներկայացումներ և կօնցերտներ են լինում, ուր ժողովուրդը յաճախում է խուռն բազմութեամբ: Ճշմարիտն ասած, ես հիմնվելով այն բանի վրա, որ հայ աւետարանականների քարոզիչները ատելով ատում են թատրօնը և կօնցէրտը, կարծում էի թէ Գերմանիայում այդպիսի բաների երես չը պիտի տեսնեմ, բայց ինձ խաբված գտայ: Երեկի աստուածաբան պրօֆէսօրները և պաստօրները ոչ թէ միայն գնում են թատրօն, այլ այնտեղ գլխաբաց են նստում ի պատիւ բեմի: Անցեալները թագաւորը տեղս լինելով մէկ մեծ եկեղեցում կօնցերտ էին կազմել: Հիմայ ես ոչը ընդունեմ. աչքովս տեսածը, թէ... մնացել եմ տարակուսանքի մէջ:

Նամակս կարճ չը լինելու համար մի բան էլ գրեմ: Գերմանացիների մէջ ես մի լաւ սովորութիւն է նկատվում: Սրանք միմեանց տունը հացին ներկայ լինելու համար միայն այն դէպքումն են գնում, երբ առաջուց հրաւիրված են: Իսկ եթէ հակառակ դէպքում կամենում են իրանց բարեկամաց տեսնելու, միշտ կէսօրից յետ են գընում: Բարեկամի տունը հիւրասիրվում են, օրինակ, սուրճով և կամ գնում են միասին զբօսնելու կամ տանը մնալով խօսակցում են մինչև մթնելը: Մեր կողմերում, գոնեա իմ տեսած քաղաքներում բոլորովին ուրիշ տեսակ է կատարվում բարեկամական այդ յարաբերութիւնը:

Մանրավաճառ Մարտիրոսի կինը, Հռիփսիմէն տանը նստած աչխատում է իր մարդու հին վերարկուից մօտը նստած փոքրիկ Գրիգորի համար մէկ վարտիք ստեղծել: Մի կողմից մկրատն է բանացնում, միւս կողմից առնորի քեսատութեան մասին է հոգս անում: «Ինչպէս պիտի ապրենք, եթէ մի տարի էլ Մարտիրոսի առնտուրը այդպէս լինի, խանութի քրէհը հաղիւ է գոյանում», մտածում է նա: Նոյն րօպէին դուռը բացվում է և ներս է մտնում պառաւ Շողակաթը երեք աղջիկների և մէկ հարսի հետ միասին, որոնք լաւ զարդարված են: Հռիփսիմէի սիրտը սկսում է թրռթռալ, իսկ լեզուն բըլբլալ:

—Այդ ինչ սիրուն էք արել, այ Շողակաթ խնամի, ինչու այդպէս մոռացել էիք մեզ. հէնց մի րօպէ առաջ ասում էի՝ Գրիգոր, Շողակաթ խնամին մեզ մոքից հանել է...:

«Ինձ երբ ես ասել», գացականչում է Գրիգորը զարմացած: Իսկ պառաւը, որպէս թէ ոչինչ չը լսեց, պատասխանում է. «դէ ինչպէս անենք, այ աղջիկ, տուններս հեռու է, փողոցները ցեխոտ է, չենք կարենում»:

Հռիփսիմէն հիւրերին նստեցնում է, իսկ ինքը գնալով խոհանոց, ճանապարհ է դցում Մաթոսին դէպի խանութ: Այստեղ վերջանում է կատակերգութեան առաջին գործողութիւնը:

Մանրավաճառ Մարտիրոսը մի քանի չայի ծախս է արել և որովհետև էլ մուշտարի չէ գալիս, սկսել է կշեռքի քարերի հետ խաղալ: Քսան ֆունտանոցի վրա կանգնեցնում է տասն ֆունտանոցը, որի վրա տեղ է տալիս հինգ ֆունտանոցին և այլն: Բայց դեռ ֆունտանոցին չը հասած ցըրվում է Բաբելօնի աչտարակը և նա սկսում է նորից չարել: Դարձեալ ցրվում է: Նա կամենում է բարկանալ և հէնց նոյն վայրկեանում քրտինքը սրբելով ներս է վազում Մաթոսը իրանից մեծ զամբիւղը պարանոցից կախած:

—Աղա, ասաց, Շողակաթ խնամիենք եկել են, միս առնէ, համ էլ բրինձ առնէ, համ էլ ասաց իւղ առնէ, համ էլ քիչմիչ, համ էլ հաւ, համ էլ...

«Էլ համհամդ թող մնայ յետոյ կասես», կըտրում է նրա խօսքը Մարտիրոսը և երեսը թըթվեցնելով հաւաքում է փողարկղի սև փողերը և դրպանը ածելով դուրս է գնում, որին հետևում է Մաթոսը: Վարագոյրը իջնում է:

Երրորդ գործողութիւնը կատարվում է դարձեալ Մարտիրոսի տանը, ուր պառաւը սենեակում բազմած իր աղջիկների հետ է խօսակցում, իսկ Հռիփսիմէն, որի տեսութեանն (?) են եկել խոհանոցից չէ դուրս գալիս:

Երեկոյեան հիւրերը ճանապարհվելիս Հռիփսիմէն ուրախ դէմքով հրաւիրում է շուտ շուտ գալ, իսկ մտքումը որոշում է այն օրը, երբ ինքը պիտի այսօրվայ փոխարէնը հատուցումն ստանայ:

Ինչպէս ես կարծում, ընթերցող, այդ բարեկամութիւն է: Եթէ ես փոքր ինչ ընդունակ լինէի այդ նիւթից մի լաւ կատակերգութիւն կը ստեղծէի և կանուանէի «այ քեզ բարեկամութիւն»: Իսկ եթէ պառաւը կէսօրից յետ եկած լինէր, կամ թէ Հռիփսիմէն կերակրէր հիւրերին այնպէս, որպէս նրանք կերակրվելու էին, եթէ տանը մնային, այնքան ծախս չէր լինի, խեղճ Մարտիրոսը ամբողջ օրը անհանգիստ չէր լինի և Հռիփսիմէն ինքն էլ ստիպված չէր լինի խօսել այն, ինչոր մտքումը չունէր: Բայց նա չէր կարող սովորութեան դէմ մեղանչել:

Ես կարծում եմ որ այդպիսի ի զուր ծախսերից է յառաջանում այն, որ հասարակութիւնը չէ կարողանում օրինաւոր կերպով մամուլին նըպաստել, անդամակցել բարեգործական ընկերութեանց և այլն: Մարդասիրական ընկերութեան տարեկան անդամ լինելու գինը ընդամենը հինգ ռուբլի է (երկու օրը երեք կօպէկ), բայց ով է նրան «սիրով» անդամակցում,—շատ քիչերը:

Մի այդպիսի բան էլ ես գրել էի զատկից առաջ Բագուից, առաջարկելով փոքրացնել զատիկվայ աւելորդ ծախսերը և փողերը օգտակար բաների վրա գործ դնել, բայց մի փոքրիկ խումբ սուտ ազգասէրների ծիծաղում էր մեզ վրա փոխանակ իրանց վրա ծիծաղելու, որ ազգասէր անուանվելով չիչը չիչի ետևիցն էին դատարկում, մինչդեռ լմէցի Թօվմասի երեխայքը քաղցից մեռնում էին: «Անձս կը զոհեմ» են պօռում, բայց մի չիչ գինին զոհել չեն կամենում:

Զը մոռանաք որ ես Լէյպցիգն եմ նկարագրում և դեռ պիտի շարունակեմ:

Ս. Թառայեանց

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խնդրում ենք այն յարգելի պարոններին, որոնք յանձն են առել գտնելու բաժանորդներ Սանդալի „Վիշապի“ համար, ուղարկեն մեզ իրանց հասցէները, որ կարողանանք գրքերը հասցնել ըստ պատկանելոյն հետևեալ հասցէով.

Тифлисъ. Головинскій проспектъ, домъ Ананова, кв. 30, Софія Петросянъ.

2—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ այս յունիսի 27-ին, առաւօտեան 12 ժամին, իր ներկայութեամբ, աճուրդ է նշանակված վարձով տալու Հալաբարի դաշտում գտնվող քաղաքային հողի երկու կըտորներ, մէկը 1890 դեսեատին 2040 քառակուսի սաժէն, իսկ միւսը 257 դեսեատին մեծութեամբ անասուններ արածացնելու, երկրագործութեան և տնտեսական ուրիշ զբաղմունքների համար, երեք տարի ժամանակով: Բարիշել ցանկացող անձինք կարող են պայմանները տեսնել վարչութեան կանցէլարիայում, առաւօտեան 8 ժամից մինչև 1 ժամը:

2—3

ՍԱՆԴԱԼ

„ՎԻՇԱՊ“

(Ցաճկահայ պանդուխտ մշակների կեանքից)

Գինն է 40 կօպ.

Հրատարակութիւն Ս. Սարգիսբէգեանի: Թիֆլիսում վաճառվում է—կենտրօնական և Կովկասեան գրավաճառանոցներում, Շահվերդեանի պավիլիօնում և Շահինեանի Ծխախոտի Մագազինում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով.

Тифлисъ. Головинскій проспектъ, домъ Ананова, кв. 30, Софія Петросянъ.

2—6

Ամենապատիւ Սրբազան Տեղակալի հրամանով, առաջիկայ 1884—1885 ուսումնական տարուայ սկզբին Գէորգեան ճեմարանի վեցերորդ դասատան և առաջին լսարանի մէջ կընդունվեն տաս-տաս գիշերօթիկ աշակերտներ. իսկ միւս դասարաններում ի սպառ ընդունելութիւն չի լինի: Այս մասին պատիւ ունիմ յայտնելու բոլոր խնդրատուներին „Արարատ“ ամսագրի և միւս լրագիրների միջոցով:

Տեսուչ ճեմարանի Ա. Նահապետեան

2—3

Ալքունական Նիկօլաևսկի ուսումնարանի համար հարկաւոր է բակով տուն լինն սենեակից բաղկացած, որոնցից հինգը պէտք է լինեն մեծ—դասատունների համար—հետևեալ տեղերում: Ոսկերիչխանից սկսած մինչև „Խլէբնայա“ անուանված հրապարակը կամ նորանց մօտակայ թաղերում: Պայմանների մասին կարող են ցանկացողները դիմել ուսումնարանիս տեսուչ Պօղոս Քաթանեանցին մինչև յուլիսի մէկը Հալաբարում, Լաղարեւսկի փողոցի վրա, Քալանթարեանցի տներում, ամենայն օր, 7 ժամից մինչև 10 առաւօտները և 5 ժամից մինչև 7 երեկոները:

3—3

ԷԺԱՆ ԾԱԽՎՈՒՄ Է

Կահկարասիք և ամաններ, Արսէնալնայա փողոց, № 24, երկրորդ յարկ:

2—2

ՊԱՍՏԱՌՆԵՐ (ՕՃՕՃ)

Ամենանոր նկարներով եկող սեզօնի համար ստացված են մեծ քանակութեամբ

ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼԻ

Օդէսայի գործարանի պահեստում: Լօրիս-Մէլիքօվսկայայ փողոց (Փօստային), Զուբալօվի տունը, հոգևոր սեմինարիայի հանդէպ:

ԲՈԼՈՐ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԳՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԵՆ՝ 10 ԿՕՊԷԿԻՑ ՍԿՍԱԾ: 12—30

Գ. ՇԱՀՎԷՐԴԵԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ, Թիֆլիսում, ընդունվում է Կ. Պօլսի **„ԱՐԵՒԵԼՔ“** լրագրի բաժանորդագրութիւնը: «Արևելք» լրագրի բաժանորդագինն է՝ տարեկան . . . . . 20 ր.
վեց ամվանը . . . . . 10 ր.
Հատով ծախվում է. . . . . 10 կ.

Բաժանորդագրութիւնը ընդունվում է ամեն ամսի 1-ին և 15-ին:

8—20

ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՅԱՒԵՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ“

Այս գինին շատ համեղ է և 25 տարիների ընթացքում աջողութեամբ գործ է դրվում հետևեալ դէպքերում: ԱԽՈՐԺԱԿԻ ԲՈՅԱԿԱՑՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՔՍԻ ՅԱՒԵՐ, և ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ:

Պէպսին „Բուդօ“ ճանաչված է Փարիզի բժշկական Ակադէմիայից և ստացել է առաջին մեդալներ հետևեալ աշխարհանդէսներին՝ ՓԱՐԻԶԻ 1867 թ., ՎԻԵՆՆԱՅԻ 1873 թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 թ. ՓԱՐԻԶԻ 1878 թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Կովկասի համար պահեստ. ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ:

31—80 (Ե. շ.)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Զ. Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցի հրատարակութեամբ՝

1: Ս. Պալասանեանի—„Քերականութիւն մայրենի լեզուի“, մասն առաջին, գինն է 25 կ.
2. Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի երկրորդ և երրորդ մասերը նոյն աշխարհաբար քերականութեան:
3. Մամուլի տակն է նոյն հեղինակի և դրաբառ „ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ“ առաջին մասն և լոյս կը տեսնի օգոստոսին:

1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՎԱՐԹԱԲԱՆԻ“

№ 6

ՀԵՏԵՒԵԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Քառանդականութիւն կրթութեան համեմատութեամբ.—Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ:—Այժմեայ դպրոցական կրթութեան վնասները:—Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ:—Ուսուցչի կոչումը.—ԿՈՒՐՏՄԱՆԻ,—Թարգ. Ա. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ:—Դասաւանդութիւն,—Մ. ՇՏԵՐՆԷՐԻ, Թարգ. Գ. ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝ բնական գիտութեանց ունեցած յարաբերութիւնը գիտութիւնների ամբողջութեան հետ:—Ճառ. պրօֆէսօր Ց. ՀԷԼՄՀՕԼՑԻ.—Թարգ. ԱԲԻՍՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:—Այլ և այլք:—Յայտարարութիւններ:

Խմբագիր—Հրատարակիչ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

1—1

ՇՕԿՕԼԱՏ ԵՒ ԴՐԱԺԷ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ

Գտնվում է **ԹԻՖԼԻՍՈՒՄ** հետևեալ մագազիններում. Գ. Մ. Կօպաձէի, Ս. Անիեվի, Ա. Պ. Ակօպօվի, Վ. Ֆ. Սիտօվի, Ե. Ա. Եղիազարօվի, Գ. Ա. Բաեաղչեվի, Ս. Ա. Ծովիանօվի, Ց. Ա. Բաբանօսօվի, Ց. Ի. Գուրգենօվի, Ի. Ա. Եւանգուլօվի և ուրիշ շատերի մագազիններում, նոյնպէս և **ԿՈՎԿԱՍԵԱՆ** երկրի միւս բոլոր քաղաքներում:

8—20 (15—30)

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Іюня 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская у., д. каз.